# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N <<ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏԾ-19/1>>**

ք. Երևան «21» հունվարի 2019թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար՝ Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԵՐՄԳՀԻ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Ա. Թառոյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **6702000 (վեց միլիոն յոթ հարյուր երկու հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ քննչական կոմիտե | «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ |
|Ք.Երևան Մամիկոնյանց 46/5 | ք. Երևան 0033, Հ. Հակոբյան 3 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011000834 | Հ/Հ 1570012431100500 |
| ՀՎՀՀ 02631263 | ՀՎՀՀ 00001672 |
| | էլ. հասցեն՝ sharoyan@mail.ru |
| | հեռ. 091 499157 |
| _____ | _____ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*« 21 » հունվարի 2019 թ. կնքված*
*<< ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏԾ-19/1>> ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 72261180/1 | Հավելված 1*<br>Հավելված 2*<br>Հավելված 3*<br>Հավելված 4* | դրամ | 6702000 | 1 | ք.Երևան, Մամիկոնյանց 46/5 | 20.12.2018թ |

**Հավելված 1***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

**<< ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ>> էլեկտրոնային տեղեկատվա – վերլուծական համակարգի սպասարկման, բարեփոխումների ներառման և ուղեկցման աշխատանքների**

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԱՏ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

- **Հայաստանի հանրապետության հետաքննության եվ նախաքննության մարմինների կողմից ներկայացվող քննչական աշխատանքի մասին, ըստ տրված ժամանակահատվածի, վիճակագրական հաշվետվությունների ստացման ծրագրային ապահովման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում՝**
- **Հայաստանի հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կողմից ներկայացվող քննչական աշխատանքների մասին վիճակագրական հաշվետվություն ըստ պահանջվող բնութագրիչների /տրված ժամանակահատվածում/ ստացման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում:**
- **Ըստ նախաքննության տվյալների որոնողական համակարգի ֆունկցիաների ուղեկցում:**

*ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐ*

- **Համակարգի գործառույթների տեղեկատվության մուտքագրման, դիտարկման և խմբագրման միջոցների ծրագրային ապահովման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում:**
- **Տեղեկատվական բազաների վարման ծրագրային ապահովման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում:**
- **Տեղեկատվության չթույլատրված հասանելիության արգելման հիերարխիայի ապահովման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում:**
- **Տվյալների արխիվացման և պահպանման ենթահամակարգի ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում:**

Հավելված 2*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ << ՖԵՄԻԴԱ >> էլեկտրոնային նախաքննություն տեղեկատվա – վերլուծական համակարգի սպասարկում, բարեփոխումների իրագործում և ուղեկցում:**

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր |
|---|
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**<br><br>**ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ**<br><br>• **Նախաքննության ընթացքում իրականացվող գործողությունների՝ բնութագրիչ օբյեկտների, անհրաժեշտ դաշտերի, նրանց միջև փոխադարձ կապերի /ծառի/ և գեներացվող փաստաթղթերի նկարագրության ծրագրային ապահովման ֆունկցիաների ուղեկցում:**<br>• **Նախաքննչական գործընթացների կառավարման գործառույթների ենթահամակարգի ծրագրային ապահովման ֆունկցիաների ուղեկցում՝**<br>• **Տվյալների բազայում առկա բոլոր հայտանիշներով / քրեական գործում եղած օբեկտների՝ անձանց, քր. Գործի և այլն/ տեղեկատվության դինամիկ որոնման, ֆիլտրման, համապատասխան ցուցակների և տեղեկանքների ստացման ծրագրային ենթահամակարգի ֆունկցիաների ուղեկցում:**<br>• **Քննչական կումիտեում ներդրված անհատական ծանրաբեռնվածության վերաբերյալ հաշվետվությունների մշակման ծրագրային միջոցների ֆունկցիաների ուղեկցում:**<br>• **Ադմինիստրատորի ենթահամակարգի աշխատանքի ուղեկցում:**<br>• **Նոր օգտատերերի գրանցումը և տվյալների փոփոխումը (պաշտոնի, կոչման և այլն) օգտվելով "ԿԱԴՐԵՐ" համակարգի տեղեկատվությունից: Նշված ֆունկցիայի աշխատանքի իրագործում և ուղեկցում:**<br><br>**Ներքոնշյալ ենթահամակարգերի բոլոր գործառույթների ֆունկցիաների բարեփոխումների իրագործում և ուղեկցում՝**<br>➢ **Օրենքով արգելված գործառույթների հայտնաբերման,**<br>➢ **Համակարգային մատյանի վարում / բազաների հետ կատարվող գործողությունների ավտոմատ գրանցման և նրանց ամփոփ տեղեկատվության տրամադրման/,**<br>➢ **Տեղեկատուների մշակման (ստորաբաժիններ, քրեական օրենսգրքի հոդվածներ, անձի դատավարական կարգավիճակներ և այլն),**<br>➢ **Միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և ղեկավարման,**<br>➢ **Տեղեկատվության չթույլատրված հասանելիության արգելման հիերարխիայի ապահովում,**<br>➢ **Տվյալների արխիվացման և պահպանման ենթահամակարգ,**<br>➢ **Ըստ տրված վերջնաժամկետների հիշեցումների ենթահամակարգի,** |

Հավելված 3*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ կարճված քրեական գործերի և քրեական գործի հարուցումը մերժված նյութերի հաշվառման տեղեկատվական համակարգի սպասարկում, բարեփոխումների ներառում և ուղեկցում**

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր |
|---|
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՐԽԻՎ**<br>▪ **ՀՀ քննչական կոմիտեի կարճված քրեական գործերի և քրեական գործի հարուցումը մերժված նյութերի հաշվառման տեղեկատվական բազաների վարման ծրագրային ապահովման ֆունկցիաների իրագործման ուղեկցում:**<br>▪ **Դատարան գնացող քրեական գործերի հաշվառումների ծրագրային ապահովման ֆունկցիաների իրագործման ուղեկցում:**<br>• **Տվյալների միասնական բազայից տարբեր հայտանիշներով տեղեկատվության դինամիկ որոնման և ֆիլտրման ծրագրային ենթահամակարգի ֆունկցիաների իրագործման ուղեկցում:**<br>• **Տվյալների բազայի արխիվացման, վերականգնման ենթահամակարգի աշխատանքի ուղեկցում:**<br>• **Տվյալների բազաներից պահանջվող տեղեկանքների կազմման ծրագրային ենթահամակարգի ֆունկցիաների իրագործման ուղեկցում:**<br>• **Արխիվի համար ոչնչացման ենթակա գործերի ցուցակների ստացման ծրագրային ապահովման մշակում:**<br>• **Համակարգի տվյալների անվտանգության ապահովման միջոցների (ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող թույլտվությունների սանդղակի) ֆունկցիաների իրագործման ուղեկցում:**<br>• **Քրեական գործերի փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների (pdf ֆայլերի) կցման և դիտարկման ֆունկցիաների իրականացման ուղեկցում:** |

Հավելված 4*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ և ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական ենթահամակարգի /ՄՌԿՏՀ/ սպասարկման, անհրաժեշտ բարեփոխումների կատարման և ուղեկցման աշխատանքների**

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր |
|---|
| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԵՎ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ**<br>• **Կադրային հաշվառումների համար, անձնակազմի անհատական տվյալների / հաստիքներ, անձնական գործի բոլոր տվյալներ և այլն/ մշակման գործառույթների ֆունկցիաների ուղեկցում**<br>• **Դեպարտամենտում մրցույթների իրագործման գործառույթների ֆունկցիաների իրագործման ուղեկցում /մրցույթի դիմորդների էլեկտրոնային մատյան, մրցույթների անցկացում (անցկացման ընթացքին համապատասխան բոլոր գործառույթները), հարցումներ/.**<br>• **Անվանացանկի վարման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում** |

- **Ծառայողների թեկնածուների ցուցակների կազմման ֆունկցիաների ուղեկցում**
- **Վերապատրաստման կազմակերպման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում**
- **Թափուր պաշտոնների վերահսկման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում**
- **Ծառայողների առաջխաղացման ցուցակ կազմման ծրագրային միջոցների ուղեկցում**
- **Դեպարտամենտում ռոտացիոն կարգով նշանակումների իրագործման ֆունկցիաների ուղեկցում**
- **Փորձաշրջանով նշանակվածներ ցուցակների ստացման ֆունկցիաների ուղեկցում;**
- **Պաշտոնի անձնագրեր հետ կապված աշխատանքների ուղեկցում:**
- **Գործուղումների գործառույթների կատարելագործում և ուղեկցում:**
- **Հիշեցումների ենթահամակարգի մշակում և ուղեկցում:**
- **Ծառայողական վկայականների հետ կապված գործառույթների մշակում և ուղեկցում:**

| **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԱՏ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ** | **Վճարման Միավոր** | **Աշխատանքի գործակից** | Գումարը |
|---|---|---|---|
| Հայաստանի հանրապետության հետաքննության եվ նախաքննության մարմինների կողմից ներկայացվող քննչական աշխատանքի մասին, ըստ տրված ժամանակահատվածի, վիճակագրական հաշվետվությունների ստացման ծրագրային ապահովման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում՝ | 228571,43 | 1,00 | 228571,43 |
| Հայաստանի հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կողմից ներկայացվող քննչական աշխատանքների մասին վիճակագրական հաշվետվություն ըստ պահանջվող բնութագրիչների /տրված ժամանակահատվածում/ ստացման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում: | 228571,43 | 1,00 | 228571,43 |
| " Ըստ նախաքննության տվյալների որոնողական համակարգի ֆունկցիաների ուղեկցում: | 228571,43 | 1,00 | 228571,43 |
| *ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐ* | | | |
| Համակարգի գործառույթների տեղեկատվության մուտքագրման, դիտարկման և խմբագրման միջոցների ծրագրային ապահովման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում: | 228571,43 | 0,50 | 114285,71 |
| Տեղեկատվական բազաների վարման ծրագրային ապահովման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում: | 228571,43 | 1,00 | 228571,43 |
| " Տեղեկատվության չթույլատրված հասանելիության արգելման հիերարխիայի ապահովման ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում: | 228571,43 | 1,50 | 342857,14 |

| | | | |
|---|---|---|---|
| " Տվյալների արխիվացման և պահպանման ենթահամակարգի ֆունկցիաների աշխատանքի ուղեկցում: | 228571,43 | 1,00 | 228571,43 |
| | | | |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ | | | |
| Նախաքննության ընթացքում իրականացվող գործողությունների՝ բնութագրիչ օբյեկտների, անհրաժեշտ դաշտերի, նրանց միջև փոխադարձ կապերի /ծառի/ և գեներացվող փաստաթղթերի նկարագրության ծրագրային ապահովման ֆունկցիաների ուղեկցում: | 192307,69 | 1,20 | 230769,23 |
| Նախաքննչական գործընթացների կառավարման գործառույթների ենթահամակարգի ծրագրային ապահովման ֆունկցիաների ուղեկցում՝ | 192307,69 | 0,50 | 96153,85 |
| Տվյալների բազայում առկա բոլոր հայտանիշներով / քրեական գործում եղած օբեկտների՝ անձանց, քր. Գործի և այլն/ տեղեկատվության դինամիկ որոնման, ֆիլտրման, համապատասխան ցուցակների և տեղեկանքների ստացման ծրագրային ենթահամակարգի ֆունկցիաների ուղեկցում: | 192307,69 | 1,50 | 288461,54 |
| Քննչական կումիտեում ներդրված անհատական ծանրաբեռնվածության վերաբերյալ հաշվետվությունների մշակման ծրագրային միջոցների ֆունկցիաների ուղեկցում: | 192307,69 | 0,30 | 57692,31 |
| Ադմինիստրատորի ենթահամակարգի աշխատանքի ուղեկցում: | 192307,69 | 1,00 | 192307,69 |
| Նոր օգտատերերի գրանցումը և տվյալների փոփոխումը (պաշտոնի, կոչման և այլն) օգտվելով "ԿԱԴՐԵՐ" համակարգի տեղեկատվությունից: Նշված ֆունկցիայի աշխատանքի իրագործում և ուղեկցում: | 192307,69 | 1,50 | 288461,54 |
| Ներքոնշյալ ենթահամակարգերի բոլոր գործառույթների ֆունկցիաների բարեփոխումների իրագործում և ուղեկցում՝ | | | |
| Օրենքով արգելված գործառույթների հայտնաբերման, | 192307,69 | 1,00 | 192307,69 |
| Համակարգային մատյանի վարում / բազաների հետ կատարվող գործողությունների ավտոմատ գրանցման և նրանց ամփոփ տեղեկատվության տրամադրման/, | 192307,69 | 0,50 | 96153,85 |
| Տեղեկատուների մշակման (ստորաբաժիններ, քրեական օրենսգրքի հոդվածներ, անձի դատավարական կարգավիճակներ և այլն), | 192307,69 | 0,50 | 96153,85 |
| Միասնական տեղեկատվական բանկի ստեղծման և ղեկավարման, | 192307,69 | 2,50 | 480769,23 |

| | | | |
|---|---|---|---|
| Տեղեկատվության չթույլատրված հասանելիության արգելման հիերարխիայի ապահովում, | 192307,69 | 1,00 | 192307,69 |
| Տվյալների արխիվացման և պահպանման ենթահամակարգ, | 192307,69 | 1,00 | 192307,69 |
| Ըստ տրված վերջնաժամկետների հիշեցումների ենթահամակարգի, | 192307,69 | 0,50 | 96153,85 |
| | | | |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՐԽԻՎ | | | |
| ՀՀ քննչական կոմիտեի կարճված քրեական գործերի և քրեական գործի հարուցումը մերժված նյութերի հաշվառման տեղեկատվական բազաների վարման ծրագրային ապահովման ֆունկցիաների իրագործման ուղեկցում: | 112500,00 | 1,80 | 202500,00 |
| Դատարան գնացող քրեական գործերի հաշվառումների ծրագրային ապահովման ֆունկցիաների իրագործման ուղեկցում: | 112500,00 | 0,50 | 56250,00 |
| Տվյալների միասնական բազայից տարբեր հայտանիշներով տեղեկատվության դինամիկ որոնման և ֆիլտրման ծրագրային ենթահամակարգի ֆունկցիաների իրագործման ուղեկցում: | 112500,00 | 1,50 | 168750,00 |
| Տվյալների բազայի արխիվացման, վերականգնման ենթահամակարգի աշխատանքի ուղեկցում: | 112500,00 | 1,20 | 135000,00 |
| Տվյալների բազաներից պահանջվող տեղեկանքների կազմման ծրագրային ենթահամակարգի ֆունկցիաների իրագործման ուղեկցում: | 112500,00 | 1,00 | 112500,00 |
| Արխիվի համար ոչնչացման ենթակա գործերի ցուցակների ստացման ծրագրային ապահովման մշակում: | 112500,00 | 0,50 | 56250,00 |
| Համակարգի տվյալների անվտանգության ապահովման միջոցների (ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող թույլտվությունների սանդղակի) ֆունկցիաների իրագործման ուղեկցում: | 112500,00 | 1,00 | 112500,00 |
| Քրեական գործերի փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների (pdf ֆայլերի) կցման և դիտարկման ֆունկցիաների իրականացման ուղեկցում: | 112500,00 | 0,50 | 56250,00 |
| | | | |
| | | | |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԵՎ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՄՈՒՏՔ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Կադրային հաշվառումների համար, անձնակազմի անհատական տվյալների / հաստիքներ, անձնական գործի բոլոր տվյալներ և այլն/ մշակման գործառույթների ֆունկցիաների ուղեկցում | 130923,08 | 3,20 | 418953,85 |
| Դեպարտամենտում մրցույթների իրագործման գործառույթների ֆունկցիաների իրագործման ուղեկցում /մրցույթի դիմորդների էլեկտրոնային մատյան, մրցույթների անցկացում (անցկացման ընթացքին համապատասխան բոլոր գործառույթները), հարցումներ/. | 130923,08 | 3,00 | 392769,23 |
| Անվանացանկի վարման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում | 130923,08 | 0,50 | 65461,54 |
| Ծառայողների թեկնածուների ցուցակների կազմման ֆունկցիաների ուղեկցում | 130923,08 | 0,50 | 65461,54 |
| Վերապատրաստման կազմակերպման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում | 130923,08 | 0,50 | 65461,54 |
| Թափուր պաշտոնների վերահսկման գործառույթների իրագործման ֆունկցիաների ուղեկցում | 130923,08 | 0,50 | 65461,54 |
| Ծառայողների առաջխաղացման ցուցակ կազմման ծրագրային միջոցների ուղեկցում | 130923,08 | 0,40 | 52369,23 |
| Դեպարտամենտում ռոտացիոն կարգով նշանակումների իրագործման ֆունկցիաների ուղեկցում | 130923,08 | 0,40 | 52369,23 |
| Փորձաշրջանով նշանակվածներ ցուցակների ստացման ֆունկցիաների ուղեկցում; | 130923,08 | 1,00 | 130923,08 |
| Պաշտոնի անձնագրեր հետ կապված աշխատանքների ուղեկցում: | 130923,08 | 0,50 | 65461,54 |
| Գործուղումների գործառույթների կատարելագործում և ուղեկցում: | 130923,08 | 0,50 | 65461,54 |
| Հիշեցումների ենթահամակարգի մշակում և ուղեկցում: | 130923,08 | 1,50 | 196384,62 |
| Ծառայողական վկայականների հետ կապված գործառույթների մշակում և ուղեկցում: | 130923,08 | 0,50 | 65461,54 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ քննչական կոմիտե
Ք.Երևան Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան 0033, Հ. Հակոբյան 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012431100500
ՀՎՀՀ 00001672
էլ. հասցեն՝ sharoyan@mail.ru
հեռ. 091 499157

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 2*
*« 21 » հունվարի 2019 թ. կնքված*
*<< ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏԾ-19/1>> ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72261180/1 | տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ | | 558500 | 1117000 | 1675500 | 2234000 | 2792500 | 3351000 | 3909500 | 4468000 | 5026500 | 5585000 | 6702000 | **6702000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ քննչական կոմիտե
Քաղաք Երևան Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ
ք. Երևան 0033, Հ. Հակոբյան 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012431100500
ՀՎՀՀ 00001672
էլ. հասցեն՝ sharoyan@mail.ru
հեռ. 091 499157

(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*«21» հունվարի 2019 թ. կնքված*
*<< ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏԾ-19/1>> ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 21 » հունվարի 2019 թ. կնքված*
*<< ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏԾ-19/1>> ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն